ՀՀ Լոռու մարզի
Փամբակ համայնքի ղեկավար
պարոն Ս. Կոստանդյանին

«ԱՍՍԱԹ» ՍՊ ընկերությունից
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան,
Վերին Անտառային 127/1, բն.7

Հարգելի պարոն Կոստանդյան,

Ղեկավարվելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման պահանջներով՝ կից Ձեզ ենք ներկայացնում «ԱՍՍԱԹ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվող գործունեության (ՀՀ Լոռու մարզի Քարաբերդի ոսկու հանքավայրի (Կենտրոնական տեղամաս) ժամկետի երկարաձգման, բացահանքի և ստորգետնյա հանքի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման հաշվետվություն) վերաբերյալ փաստաթղթերը՝ 2023 թվականի դեկտեմբերի 20-ին, ժամը 12:00-ին դրանց վերաբերյալ հանրային լսումներ (քննարկում) կազմակերպելու համար:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի տարածքում, լսումները (քննարկում) կազմակերպվելու են համատեղ՝ ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի Քարաբերդ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի վարչական շենքում:

Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ հանրային լսումների (քննարկում) պատասխանատու է հանդիսանում ՀՀ Լոռու մարզի
Փամբակ համայնքի ղեկավարը, ով կրում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշմամբ սահմանված գործառույթների իրականացման պարտականությունը, այդ թվում՝ հանրային լսումների (քննարկում) վերաբերյալ ծանուցումը պաշտոնական կայքում տեղադրելու, համայնքի ղեկավարի նստավայրի և հանրային

to: Mr. S. Kostandyan
The Head of Pambak community
of Lori Marz of RA

from: ASSAT LLC
Address: apt. 7, building 127/1,
Verin Antarayin str., Yerevan, RA

Dear Mr. Kostandyan,

Being guided by the requirements of the RA Law on Environmental Impact Assessment and Expertise and the November 19, 2014 RA governmental decision No1325-Ն we present to you the documents related to the activities planned by ASSAT LLC (The report of the environmental impact assessment of prolongation of [the mining license of] the RA Lori Marz's Karaberd gold deposit (Central area) and open-pit and underground mining operations) for organization of public hearings (discussion) on them on December 20, 2023, at 12:00 a.m.

Taking into account that the planned activity will be executed in the territory of Pambak community of Lori Marz, RA, the hearings (discussion) will be organized jointly in the administrative building of the residence of the administrative head of Karaberd settlement of Pambak enlarged community of RA Lori Marz.

At the same time, we inform you that the responsibility for public hearings (discussion) bears the head of Pambak community of Lori Marz of RA, who has the obligation to execution of the functions defined by the RA Law on Environmental Impact Assessment and Expertise and the November 19, 2014, RA governmental decision No. 1325-Ն, including the obligation to place an announcement on public hearings (discussion) on the official website, post it on the notice boards reserved for announcements in the administrative building of the residence of the head of the community and

նշանակության շենքերի՝ հայտարարությունների համար առանձնացված ցուցատախտակների վրա փակցնելու, նախատեսվող գործունեության վերաբերյալ փաստաթղթերը սահմանված կարգով և ժամկետներում ծանոթացման տրամադրելու պարտականությունները:

public buildings, to ensure familiarization with the documents on the planned activities in the prescribed manner and within the established timeframe.

Կից ներկայացվում է ՀՀ Լոռու մարզի Քարաբերդի ոսկու հանքավայրի (Կենտրոնական տեղամաս) ժամկետի երկարաձգման, բացահանքի եվ ստորգետնյա հանքի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման հաշվետվությունը:

Please find attached the report of the environmental impact assessment of prolongation of [*the mining license of*] the RA Lori Marz's Karaberd gold deposit (Central area) and open-pit and underground mining operations.

Հարգանքով՝ / Best regards
Տնօրեն / Director
Լ. Վաշտիկ / L/ Vashtik

07.12.2023

«ԱՍՍԱԹ»
"ACCAT"
"ASSAT"
03607664